



ISSN 1829-0272

Հայ Urutun

ARMENIAN ART

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

2/2007



www.armenianart.am

Զարեհ Սութաֆյան, «Նավահանգիստ»

armenie
mon amie

- ▶ **ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԽԱՈՈՒԹՅՈՒՆԸ**
Հայ մշակույթի տոնահանդես «աշխարհի մայրաքաղաքում»
- ▶ **ԱՂԹԱՍԱՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՁԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ**
- ▶ **Զարեհ Սութաֆյան - 100**
- ▶ **ՄԵՎԱԿՈՒԹԱՅԻՆ անցուղարձը Հայաստանում եւ Սփյուռքում**



Ավարտին է մոտեցել Ֆրանսիայում Հայաստանի տարին, որը մեր իրականության մեջ նախադաշտ չունեցող երեւույթ էր: Առաջին անգամ այս ծավալով, խորությամբ եւ բազմազանությամբ մեր երկիրը ներկայացվեց մեկ այլ պետք-թյունում՝ քաղաքական տնտեսական, հասարակական, ճշակութային հարթություններում:

Ֆրանսիայում «Հայաստան, իմ բարեկամ» նշանաբառվ անցկացվող Հայաստանի տարվա շրջանակներում երկրի 160 մեծ ու փոքր բնակավայրերում կազմակերպվեցին ավելի քան 850 տարարնույք միջոցառումներ, որոնց նվիրված էին մեր երկրի պատմական ժառանգությանը, նոր շրջանի եւ ժամանակակից արվեստին, լուսանկարչությանը, կինոյին, պահնդական եւ արդի երաժշտությանը, պարին, թատրոնին, իհն ու նոր գրականությանը: Կարող եմ վստահ ասել, որ սա նախադաշտը չունեցող երեւույթ էր Հայաստանի համար, քանի որ մեր երկիրը երբեւ հնարավորություն չեր ունեցել իր արժեքները նաման մակարդակով եւ ծավալով ներկայացնելու դրսում եւ կարծում են, որ սա իրադարձություն էր նաև Ֆրանսիայի համար, որը թեւել Հայաստանի մտերիմ քարեկամն է, սակայն դեռեւս առիջ չեր ունեցել մեզ այսքան հորությամբ ճանաչելու:

Ֆրանսիայում Հայաստանի տարին դարձավ լիարժեք իրադարձություն, քանի որ շահմանափակվեց միայն մշակութային միջոցառումներով, այլ դարձավ Հայաստան-Ֆրանսիա միջազետական հարաբերությունների, հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների բարեկամության, հայ մշակույթի քարոզչության, Հայաստան երկրի գորչչությունը միջազգային գրուաշրջության առաջ ցուցադրելու, սեփական արժեքներուն ու կարողություններուն եւս մեկ անգամ ստուգելու, նաև հայապահանության տեսակետից պատմական կոչքելու արժանի մի իրուրտյուն: Լավ ծրագրված եւ իրաշալիուրեն իրականացված այս իրադարձության շնորհիվ Հայաստանը մեծարվեց Ֆրանսիայում: Սա անկասակած լուրջ հաջողություն է, որն անշուշտ իր շարունակությունը պետք է ունենա:

Հասմիկ Պողոսյան
ՀՀ մշակույթի նախարար



Վիգեն Մարգարեան
Հայաստանի Հանրապետության
նախագահի օգնական
Հայաստանի տարվա հայկական կողմից գլխավոր
հանձնակատար

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԵԶԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Այ կերպ չես բնորոշի եվլոպական այս երկրում անցկացված Հայաստանի տարվա ընդհանուր միջուրությունը: Ֆրանսիան մեկ տարի շարունակ շնչում էր հայկականությամբ: Ամենուր «Armenie, mon amie» (<«Հայաստան, իմ բարեկամ») կարգախոսն էր փողոցների վերգետնյա հատվածներում թե մետրոյի ստորգետնյա կայարաններում, անշարժ թանգարանների պատշերին թե շարժական տրանսպորտի վրա: Երկու ողջ տարածքում հյուսիսից հարավ եւ արևելքից արևմուտք, մեծ ու փոքր շուրջ 160 բնակավայրերում տեղի ունեցան 800-ից ավելի միջոցառումներ մեկը մյուսից ուշագրավ եւ հիշարժան: Խնդիրն այստեղ ամենեւին էլ քանակական կողմզ չէ (սոսկ համեմատության համար ասենք, որ Ֆրանսիայում ջինսատանի տարվա շրջանակներում կազմակերպված միջոցառումների թիվը 350 էր, բրազիլիայի տարվանը՝ շատ քիչ էր). Արագիլիայի տարվանը՝ հրաշալիքները, լինի «Հայաստանի գանձեր», կըումիի արբայրության «Հայ լուսավորյալ հայերե», Ռուենի եւ Սեն-Ռաֆայելի «Հայաստան 500.000 տարվա պատմություն լեռներում», Փարիզի Շուկա բանական «Այվազովսկի. ծովի պոեզիան», Փոքր պալատի «1830-1930 թթ. հայ կերպարվեստը», Լյուսեմբուրգյան այգու «Օրանժերի» սրահում կայացած ժամանակակից արվեստի, ինչպես նաև Մարտիրոս Սարյանի, Արշիլ Գորկու, Սերգեյ Փարաջանովի արվեստի նախահայրերի թվին դասպող Բնիշտյունն ու լուրջումն էր:

ճիշտ է, Հայաստանի տարին ներա-

ռում էր նաև պաշտոնական ու գործառնական այս երկու մանագան հանդիպումներ, քիւթեսքներ եւ այլն, սակայն ընդհանուր ուղղվածությամբ այն, անտարակույս, մշակութային էր եւ հմարավորությունը ընթեռեց եվլոպացիներին ի մոտ հաղորդակցվելու Արարատի փեշերին ապրող հիմնավորուց մի ժողովովի հարուստ ու ագնվական ճշակույթին:

Ուշագրավն այն էր, որ տարվա ներառած ցուցահանդեսներու ու համերգները, կոնֆերանսներն ու փառատոնները չին կրում պատհական ու գարությունը կազմուներ մեկ ընդհանուր ծրագրի կոչված հայ ժողովորդի պատմական ու կազմակերպված միջոցառումների թիվը 350 էր, բրազիլիայի տարվանը՝ շատ քիչ էր ստացվեց, ոչանակում է շատ քիչ բան ասել: Կերծագետ հաշողվեց ստեղծել այն մորեն, որով այստեղում կարելի է ներկայանալ աշխարհին: Այն, բնականաբար, դյուրին չեղավոր է: Ինչպես Ֆրանսիայում Հայաստանի դեմքան էին առաջարկություն այս պատկերանում և արգանդանում կազմուներ մեր նշական այստեղում էր ներկայացմանը: Ասել, որ ամեն ինչ ստացվեց, ոչանակում էր կազմակերպված, որ առջեղի պատկերանում էր ոչ թե տարածական կողմունակությունը և կազմակերպված միջոցուն անել աշխարհին ներկայացված միջակությունը հայության վերաբերյալ (այն է ինչ բնօրինակներ) Ֆրանսիային ու վերջինի միջոցուն անել աշխարհին ներկայացված միջակությունը շնորհանդեսն այնպես էր կազմակերպված, որ առջեղի պատկերանում էր ոչ թե տարածական կողմունակությունը և կազմակերպված միջոցուն անել աշխարհին ներկայացմանը: Ասել, որ ամեն ինչ ստացվեց, ոչանակում էր կազմակերպված միջոցուն անել աշխարհին ներկայացմանը:

Ֆրանսիայում Հայաստանի տարին ներա-



ի հերթին պահպան պահպան առջարկությունը միջազգությամբ անուն կազմուների առջարկությունների առաջնանձն լուսաբանումների, այն է իր ժողովուրդի բարեկարգարաման պատմության այստեղում աշխատանկան դիմումը: Այսպիսի գործությունը կազմակերպված միջոցուն անել աշխարհին ներկայացմանը: Այսպիսի գործությունը կազմակերպված միջոցուն անել աշխարհին ներկայացմանը: Այսպիսի գործությունը կազմակերպված միջոցուն անել աշխարհին ներկայացմանը:

Ֆրանսիայում Հայաստանի տարվա ընդհանուր միջոցառումների մեջ, իհարկե, կային մի քանիսը, որոնք առանձնահատուկ արժեք ունեն եւ համանան վերաբերյունը առաջարկությունների առանձն լուսաբանումների, այն է իր ժողովուրդի բարեկարգարաման պատմության այստեղում աշխատանկան դիմումը: Դրանցից առաջինն Արլում կազմակերպված «Արարատ լեռան փեշերին» ցուցահանդեսն էր, որ նպատակ ուներ իհարկե հիմնականության հայաստանի տարմական դրամագույնի հայությանը ու այլ ամենը իրենց դա-

«ՀՈՎԵՐ»

2006-ի դեկտեմբերի 1-ին «Հովեր» երգչախումբը Սոնա Հովհաննիսյանի ղեկավարությամբ առանց նվազակցության հոգեւոր երաժշտության միջամտությամբ առաջ կատարել է պատմություն՝ պատմելով առաջնահայր Արքայի ամառանոցի պատմության մասին:



Խամու եւ զեփյուոի երգը

համակարգը՝ խազերը, կորսվել է:

Մեծ զավածություն ունեցող այս ճարտար մեղեղները, նատուցված ճայնի մաքրությամբ, արտահայտում են բարձր ոգեղնություն եւ խիստ երկուղածություն ներշնչում։ Ոգեշնչումից ծնված, խորապես մարդկային այս երգերը ծավալվեցին եկեղեցու կամարների ներքո՝ միջանց կապելով մարդուն եւ նրա ծգություն առ Աստված։ Դրանք կատարյալ ներդաշնակություն ունեն հայկական եկեղեցների ճարտարապետական պարզության եւ մանրանկարների

պայծառության հետ։ Նրանց ուժը լիցքավորվեց հանդիսարահի խանդավառությունից բխած զգացմունքներով։ Հազվադեպ եւ թանկարժեք մի պահ, որ մեզ պարգևեց Հայաստանի այս տարին։

**ԱՆՁԻՏ ՍԱՄԻԿՅԱՆ
«Աշխարհ», 23 դեկտեմբեր 2006**

**Ֆրանսերենից թարգմանեց
ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆԸ**

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄՈՆՊԵԼՅԵ ՀԱՄԱՍԱՐԱՆԻՒ



Հունիսի 11-12-ին Ֆրանսիայի հմագույն համալսարանական կենտրոն Մոնպելյե քաղաքի Մոնպելյե-3 համալսարանում կայացավ գիտաժողով՝ «Հայ եկեղեցն հոյսների ու լատինացիների միջև 11-15-րդ դդ.» խորագրով։ Նախաձեռնողն էր Մոնպելյեի համալսարանի «Միջերկրածովյան երկրների միջնադարյան պատմության ուսումնասիրության կենտրոնը», պատասխանատուներ՝ մերար Դեղյանը եւ Իզաբել Օժեն։ Ֆրանսիացի եւ ֆրանսահայ հետազոտողներից բաց գիտաժողովին մասնակցում էին մաս-

նագետներ Իտալիայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից եւ Հայաստանից (ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտից Ազատ Բոզյանը, Երեւանի պետ. համալսարանից Լեւոն Չուլավազյանը, Սատենադարանից Եղվարդ Բաղդասարյանը եւ Կարեն Մաթեոսյանը)։

Զեկուցումները վերաբերում էին նշված դարաշրջանի հայոց պատմության եւ մշակույթի զանազան հարցերին, ներկայացնելով նաև նոր փաստեր ու տարբեր խնդիրներին առնչվող նոր նոտեցումներ։

Հասմիկ Տեր-Կարապետյանը «Ս. Մեսրոպ» կենտրոնում

ՖՐԱՆՍՈՒԱ ԳՈՒՇՈՒԶՅԱՆ

Երևանի մասնակից մարդու պատմությունը

Կարեն Սմիննյանը՝ մեր մշակութային կենտրոնի արեւելահայ մշակույթի մասնագետը, օգտվելով ղերասանուի Հասմիկ Տեր-Կարապետյանի Փարիզում գտնվելու առթից, իրավիրեց նրան Տուեն փողոց՝ Երկրագուների հետ հանդիպման, որոնք դեռ Հայաստանում առիթ էին ունեցել հիմնալ նրա տաղանդով։ Նա նաև հնարավորություն ընձեռեց նրանց, ովքեր մինչեւ հիմա ծանոթ չեն իրեն, բացահայտել մի դերասանուին, մի բացառիկ ողբերգակի։

Այս դեպքում «հայկական հեռախոսը» շատ լավ գործեց, քանի որ ծրագրից դուրս շտապ կազմակերպված այս երեկոյթը մարդաշատ է՝ շնորհիվ դերասանուին համբավի։ Կատարումից առաջ դերասանուին մեջ արտասովոր ոչինչ չի նկատվում։ Անկասկած, նա շատ բարեհամբույր է, մի քիչ սերեւեր, եւ իր թիկնոցը կորում է փոքր-ինչ թատերական կեցվածքով։ Սակայն արդյոք այդքանը բավական է՝ մարդկանց ուշադրությունը գրավելու համար։

Բավական է, որ նա մտմի դերի մեջ եւ առաջին իսկ բարերից գրավի հանդիսատեսին, որպեսից այդ հարցը գտնի իր պատասխանը։ Ամբողջովին գերվում են։ Ինչ էլ որ նա կատարի՝ կարդա Վկյամ Սարոյանի «Հայ մոլուք», թե թույն խմելով սիրուց մահանա՞ անհնար է աչք կտրել նրա շարժումներից, նրա բովիչ ծայնի ելեւջներից։ Նա դյուրում է՝ օգտվելով իր զինանոցում ունեցած բոլոր հնարավորություններից՝ նոր իր հեգմանքից անցնելով մռայլ ողբերգության։

Ես ենու էի նրա բոլոր խոսքերը հասկանալուց, բայց դեռ պատրաստ է ժամեր շարունակ ունեցում եմ։



Կարեն Սմիննյանը մեր մշակութային կենտրոնի արեւելահայ մշակույթի մասնագետը, օգտվելով ղերասանուի Հասմիկ Տեր-Կարապետյանի Փարիզում գտնվելու առթից, իրավիրեց նրան Տուեն փողոց՝ Երկրագուների հետ հանդիպման, որոնք դեռ Հայաստանում առիթ էին ունեցել հիմնալ նրա տաղանդով։ Նա նաև հնարավորություն ընձեռեց նրանց, ովքեր մինչեւ հիմա ծանոթ չեն իրեն, բացահայտել մի բացառիկ ողբերգակի։

Քյան մեջ առաջին անգամ հրապարակվ սգացել են մի հայուին մահը։

Պարզ երեւում է, որ Հայաստանի Տեր-Կարապետյանի վրա ուժեղ աղբեցություն է ունեցել այդ դերասանուին, նրա տաղանդը եւ ծակատագիրը, որը եւ դարձել է նրա կուտքը։

Հատ հմարավոր է, որ իմ գրածը քիչ է համապատասխանում այդ երեւոյի ընթացքում հնչած եւ ներկայացված իրականությանը։ Բայց ամբողջ աշխարհում հանդիս եկած դերասանուին կերպարանարմնավորումը ցնցեց բոլորին։ Իսկ ես դեռ վառ եմ պահում բոլոր այս հոյեցերը, որոնք ծնվեցին իմ մեջ՝ նրա արտասանության, շարժումների եւ կատարման մոգական աղբեցությունից։

Թարգմանություն
Ֆրանսերենից



«ԳԵՏԱՇԵՆ» ԵՐԳԻ ՀՆՁՅՅՈՒՆԵՐԸ ՃԱՆՉ ԷԼԻՉԵԻ ՄԱՏՈՒՅՅԱՆԵՐՈՒՄ

Տ

րանսիան բարեկամական այն երկիրն է, որտեղ Դայոց ցեղասպանության զինքնումը կատարվում է ամենաքաղաքացի պետական-կառավարական մակարդակով: Բացառություն չի նաեւ 2007 թ. ապրիլի 24-ը: Ավելի՝ այս տարի այն նոր գույն ու շեշտ ընդունեց՝ կապված տարեսկզբն Ստամբուլում հայ լրագրող, «Ակօս» թերթի խմբագիր Դանի Դինքի սպանության հետ:

Ներկա ֆրանսիայի ողջ տարածում այսօր արդեն հարյուրից ավելի հայկական տեղանուններ կամ հրապարակներ, հուշարձաններ, փողոցներ են այս տարի ավելանում: Մոտ մեկ տասնյակով: Այսպես, այս տարվա ապրիլի 11-ին Փարիզի 9-րդ շրջանի հրապարակներից մեկն անվանակոչվեց հայազգի մտավորական, Փարիզում 1925-ից լույս տեսնող «Յառաջ» թերթի հիմնադիր եւ խմբագիր Շավարշ Միսաքյանի անունով: Տասն օր անց՝ ապրիլի 21-ին, Փարիզամերձ Մերոն լա Ֆորե քաղաքի կենտրոն

նական հրապարակում կատարվեց Դայոց ցեղասպանությանը նվիրված հուշաքարի բացման արարողությունը՝ ներկայությամբ քաղաքացիների կամուրջ Սարսելի, ֆրանսիայում Դայաստանի դեպան եղուարդ Նալբանդյանի եւ փոխքաղաքապետ Լեւոն Դովնանի, որն այս նախաձեռնության հերինակն ու ոգեշնչողն էր: Մեկ շաբաթ էլ չանցած եւս մեկ՝ «Դայաստան» անունով հրապարակ բացվեց դարձյալ մայրաքաղաքին մերձ գտնվող մեկ այլ՝ Պլասին Ռոբերտ Ֆլորի քաղաքում:

Ըստ ՀՀ դեսպանի, նախատեսվում է մեկ հայանուն հրապարակ էլ բացել Սոմավելում նվիրված ֆրանսիական դիմադրության շարժման մասնակից, մեր հայրենակից Միսաք Մամուչյանին:

Յիշատակի ապրիլյան արարողություններ տեղի ունեցած ֆրանսիայի մեջ ու փոքր բազմաթիվ բնակավայրերում: Յիմնական իրադարձությունները, սակայն, Փարիզում էլ ապրիլի 24-ին, դրան նախորդող եւ հաջորդող օրերին: Որպես կամուն, մոտական հրապարակներից մեկում առաջ գոյացած է ապրիլի 24-ի բացվում է Փարիզի քաղաքաբետարանի գլխավոր սյունագրությունը: Այս տարվա իր ելույթում Փարիզի քաղաքապետը կազմակերպվող հիշատակի ընդունելությամբ, որին հրավիրվում են ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչները:

Կիրակի հոգեհանգստյան հայածության պատարագ է մատուցվում Աստվածամոր տաճարում: Այս տարի այն տեղի ունեցավ ապրիլի 22-ի հետմիջօրեին՝ ծեռամբ ֆրանսիայի կարողի հայերի առաջնորդ, գերապայծառ Գրիգոր Գարոյանի եւ ներկայությամբ Դայոց առաքելական եկեղեցու ու քոյլ եկեղեցիների: Պատարագից անմիջապես հետո Նոտր Դամի աջքերի հրապարակում մի ուշագրավ ակցիա էր ծեռնարկել հայկական «Վան» կազմակերպությունը՝ կամուրջ նետելով 20-րդ դարի առաջին՝ հայկական եղեռնի եւ 21-րդ հարյուրամյակի առաջին՝ դարի փուլյան ցեղասպանության միջեւ: Ակցիայի մասնակիցները՝ հայեր եւ այլազգիներ, ստորագրում էին մարդկության դեմ գործված հանցագործությունները

նուն մեկ անգամ եւս դատապարտեց ժամանակակից Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը, ապա հանդիսությանը ներկա Դրանտ Դինքի հարազատներին խոստացավ փարիզյան մի գործորդի ամկյուն կոչել անվախ հայ լրագրողի անվամբ:

Օրվա երկրորդ կեսին ժամ Գումըն փողոցում գտնվող Սրբական Հոգևոր հայկական եկեղեցին ի գորու չէր տեղափորելու դեպի սուրբ պատարագի շտապող բոլոր հայորդիներին: Վերջիններս այնուհետև հավաքվեցին մերձակայքուն գտնվող Կոմիտասի արձանի մոտ, որտեղ համամարդկային այս ոճին իրագործած դահիճների եւ նրանց մերօրյա պաշտպանների քննադատությամբ հանդս եկան հայկական տարբեր կազմակերպությունների եւ ֆրանսիայի աղդեցիկ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Նմանօրինակ միջոցառումներին մշտապես ներկա էին ելույթներով հանդս էին գալիս ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր, արդյունաբերության նախկին նախարար եւ Նիկոլ Սարկսինի խորհրդական Պատրիկ Դենչյանը եւ ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհրդի նախագահը:

«Եղինակը կոմիտասի արձանի մոտ Փարիզի 9-րդ շրջանի քաղաքապետ Ժակ Բրավիլի հետ, որի նախաձեռնությամբ բացվեց Հավաք Միսաքյանի հրապարակը

24-ի այս տարվանը արեւային էր եւ առեցուն վաղ ծաղկած շագանակների բուրմունքով: Դա էլ իր հերթին նպաստեց, որ հայության յոթհազարանոց երթը սահիկ կամ մեքենաների ուղեկցությամբ եւ հայ սկաուտների թմրուների հատու զարկերի ներքո հանգիստ ու խորհստ քայլերով շարժվեր դեպի բուրբական դեսպանատուն: Այնկարագրելի էր այն զգացողությունը, որ բոլոր ունեցանք Շանգ Էլիզեի մատուցմերում «Գետաշեն» հանրահայտ երգի ելեւելները լսելիս: Դրանք հայության եւ հայկականության գորեն լիցքերով համակեցին երթի մասնակիցներին: Այն, որ վերջիններին մեջ դիմ չին հայոց եռագույնը ծեռքին երեխաներն ու պատամիները, լավատեսությամբ տոգորեցին Դայ դասի վաղվա պաշտպանների շարքերի աճող խոտության հանդեպ:

L. Լաճիկյան
Փարիզ



Թանգարան



Գուստավ Կուրեբ, Երիտասարդ կնոջ դիմանկար

Ի տարբերություն արեւմտա-
ելքոպական գեղարվեստական
մյուս դպրոցների, ֆրանսիական
արվեստը ներկայացված է առա-
վել ամբողջական ձեռվու եւ ներա-
ռում է ամենից երկար ժամանա-
կահատվածը՝ 17-20-րդ դարերը:
18-րդ դարի հայտնի վարպետ-
ներ ժամ Օնորե Ֆրագնարի,
Ֆրանսուա Դրուեի, Կարլ Վանլոո-
յի, Ժան-Բատիստ Գրյոզի աշխա-
տանքները կազմում են ֆրանսիա-
կան հավաքածուի կուռ մասը: Տո-
գորված ռոկոկո ոճին հատուկ հե-
տոնիստական ոգով, թատերակա-
նության, դեկորատիվիզմի, դիցա-
բանական սյուժեների հանդեպ սի-
րով, այդ նկարչների աշխատանք-
ները լուսաբանում են իրենց ժա-
մանակի՝ զգացականությամբ եւ
կյանքի բոլոր բարիքները վայելե-
լու ծգտումով լեցուն մթնոլորտը:
Ֆրագնարին վերագրվող «Ոի-
նալդոն եւ Արմիդան» ռոկայլ ոճի

կենսականությամբ, պայմանավո-
րում են նկարի բարձր գեղարվես-
տական արժեքը: Եւ չնայած ֆրա-
գնարի հեղինակությունը կասկա-
ծի է առնվում, այս գործն իր ար-
ժանի տեղն է գրավում հավաքա-
ծուի գլուխգործոցների շարքում:
Ինչպես եւ Գրյոզի «Աղջկա գլխա-
նկար» պատկերում, գործող ան-
ձանց բարետն ու քաղցրիկ ար-
տարինը, նուրբ՝ բաց երանգնե-
րով ներկապնակը, հարթ ֆակտու-
րան երեխն ջնջում են սահման-
ները ռոկոկոյի եւ սալոնային ար-
վեստի միջեւ, որը զգալի ազդեցու-
թյուն է գործել Գրյոզի կայացման
վրա: Եվրոպայում եւ Ուստաստա-
նում մեծ հաճրավ վայելող էլիկա-
բեր Վիետ-Լեբրենի «Հջանուիի
Մեծիկովայի դիմանկարը դստեր
հետ» նույնպես կորում է սալոնային
արվեստի արձագանքները եւ միեւ-
նույն ժամանակ միավորում է սեն-
տիմենտալիզմի եւ կլասիցիզմի բն-

Ֆրանսիական գեղանկարչությունը

Յայաստանի ազգային պատկերասրահում

Թեոդոր Ռուստ, Բնանկար



Յայաստանի ազգային պատ-
կերասրահի հավաքածուի արևմտ-
աստվածական բաժինը ներկա-
յացված է իտալական, հոլլանդա-
կան, ֆլամանդական, ֆրանսիա-
կան դպրոցներով, իսպանացի,
անգլիացի, շվեյցարացի եւ ամե-
րիկացի վարպետների ստեղծա-
գործություններով: Յնարավոր է,
այն զիջում է իր քանակով ու ամ-
բողջականությամբ հայկական
եւ ռուսական հավաքածուներին,
սակայն Ֆինստորեստոյի, Գվերչի-
նոյի, Դրուեի, Կլասի, Գոյենի, Ռու-
ստի, Բուդենի աշխատանքների
առկայությունը, քիչ հայտնի նկա-
րիչների ստեղծագործությունների
գեղարվեստական արժեքը պայ-
մանավորում են արեւմտավոր-
պական հավաքածուի կարեւորու-
թյունը:

բնորոշ կոմպոզիցիաներից մեկն
է: Տորկվատ Տասոսի «Ազատա-
գորված Երուսաղեմ» պոեմի սյու-
ժեն շատ տարածված էր այդ ժա-
մանակի արվեստում, մարմնավոր-
վելով Երաժշտության ու գեղանկա-
րի մեջ. Իշենք Լյուվլիի եւ Ֆ. Բու-
շեի ստեղծագործությունները: Կեր-
պարների պատկերավորման եղա-
նակը, բնապատկերի դեկորատի-
վությունը, հարուստ գունավորու-
մը՝ արժաքագույն-կանաչ-վարդա-
գույն երանգներով, զծերի ու ծեւե-
րի մեջմ անցումները, որոնք կեր-
պարներն օժտում են լիարյուն

որոշ գծերը:
Թանգարանի ցուցադրման
մեջ առավել ամբողջականորեն
արտացոլված է ֆրանսիական
բնապատկերի զարգացումը: Այն
ներկայացված է սկսած 17-րդ
դարից, Ն. Պուսենի աշակերտ
Գ. Շյուգեից, որը զարգացնում էր
կլասիցիզմի ոճական ավանդույթ-
ները, մեծ ուշադրություն դարձնե-
լով լուսավորության խմբիրներին,
ինչը տարածականություն, դրա-
գույն երանգներով, զծերի ու ծեւե-
րի մեջմ անցումները, որոնք կեր-
պարներն օժտում են լիարյուն

Թանգարան

րությունը նաև 18-րդ դարի հայ-
տնի ծովանկարիչ Ժ. Վերնեի բնա-
նկարչության բնորոշ զիջն է. նա
պատկերում էր նավակոծություն-
ներ, լուսնակ գիշերներ, մայրա-
մուտը եւ թարմացրել էր ժամը
իրականության նշաններով: Նա-
վաքածուի մեջ ներկայացված է
նաև նրա կրտսեր ժամանակա-
կից Ջուլիե Ռոբերի գործերի մի
շարք, որում արտացոլված է նրա
սիրելի հուալիայի բնության ու
հուշարձանների սեփական ընկա-
լումը: Կեհությամբ լեցուն անտիկ
ավերակները նկարիչն աշխուժաց-
նում է իրենց առօրյա գործերով
զբաղված մարդկանց ֆիգուրնե-
րով, ինչը կենսականություն եւ հու-

Եվգենի Բուտիմ, Նավահանգստ



զական հնչողություն է հաղորդում
նրա կոմպոզիցիաներին: Ուսալիս-
տական ավանդույթների զարգա-
ցումը 19-րդ դարի ֆրանսիական
արվեստում կապված է բարիքո-
նյան դպրոցի բնանկարիչների
հետ: Դպրոցի առաջնորդ Թեոդոր
Ռուստի «Բնապատկերին» հա-
տուկ է մոնումենտալությունը, ամ-
բողջականությունը, հստակ ոռ-
մանտիկ հնչողությունը, նկարչի
վաղ շրջանի համար բնորոշ ար-
տահայտչամիջոցները: Ուման-
տիկ է եւ Դիազ ու լա Պենյայի ար-
վեստը: այս վարպետը, որ նկարել
է խորհրդավոր բնապատկերներ,
ժամանակի ընթացքում, Ռուստի
ազգեցությամբ, փոխեց իր գեղար-
վեստական ոճը, որն ավելի հրա-
պաշտական դարձավ: Ուսալիստա-
կան միտումները շառունակում
են զարգանալ այդ ուղղության

ամենից վառ ներկայացուցիչ Գ.
Կուրեբի ստեղծագործության մեջ,
սակայն թանգարանի հավաքա-



Սատրից Բրամին, Կրկտում

ծուռում պահպող «Աղջկա գլխակը»
նրա վառ ստեղծագործություննե-
րից է եւ տոգորված է ռոմանտիզ-
մի ոգով, որն, ինչպես հայտնի
է, խոր չը նկարչին: Գեղանկա-
րի հավաքածուում իմպրեսիոնիզ-
մի նախորդներ Ա. Մոնտիչելի,
Է. Բուլենի գործերի առկայությու-
նը, ավելի ուշ շրջանի հեղինակ-
ների՝ Լ. Անկետենի, Մ. Բրիանշո-
նի, Բ. Բյուֆեի առանձին կոնպր-
ոդիչամեր հնարավորություն են
ընձեռում ընդհանուր պատկերա-
ցում կազմելու նոր ժամանակների
ֆրանսիական նկարչության զար-
գացման ուղիների մասին:

**Իրինա Բաղդամյան
ՀԱՊ-ի արտասահմանայն
գեղանկարի բաժնի վարիչ**

Աղոյք Մոնտիչելի, Զրուսան

գեղանկարչություն

Յայրենի բնաշխարի հետ առաջին համդիպումը, այն էլ տարեց հասակում, ստեղծագործական այնպիսի եռանդով համակեց ֆրանսահայ նկարիչ Զարեհ Մուրաֆյանին, որին չեղական ապրում նախորդ՝ Վտարանդիության տարիներին: Կյանքի վերջին տասնամյակում նրա վրձնած հայրենի բնապատճերները՝ լեռների, նրանց գրկում հակիմքների նման ծվարած եկեղեցներու ու Սեւանա լճի նկարաշրթեր, որոնց մեջ թեև գգացվում է այրող սիրուց առաջացող հապճնպություն, բայց ուշագրավ են նկարչական արտահայտչականի ինքնատիպությամբ, հնչող՝ կենսախինդ գու-

ՉԱՐԵՀ ՄՈՒԹԱՖՅԱՆ

-100




Ամենայն հայոց կարողիկոս
Վեհափառ Վազգեն Ա-ի հետ,
Երևան, 1967 թ.

Երանգների անկաշկանդ հորդումով: Ասվածի լավագույն օրինակներից մեզը՝ «Լուսնի լույսը Սեւանի վրա» ընտրվեց ցուցադրվելու վերջերս «Յայաստան - իմ բարեկամ» ծրագրով Փարիզում կազմակերպված «Ծովի պյեղիան» նկարահանդեսում:

Զարեհ Մուրաֆյանը ծնվել է Սեւ ծովի ափին, Սամսոնում: Տասնմեկ հոգուց բաղկացած նրանց ընտանիքը 1915-ին բռնում է աքսորի ուղին: Մինչեւ Մալաթիա մնում է միայն մեզը՝ ապագա նկարիչը: Այստեղ ամեն ինչ վերջանում ու ամեն ինչ նորից է սկսվում: Սկզբում որրանոց, ապա ազգային վարժարան: Երկու հազար որբերի հետ տեղափոխվում է Շունաստան, որտեղից՝ 1924-ին Վենետիկ, դառնում Միլանի արվածագործությունում: Երեք տարի անց Զարենին ընդունվում է Միլանի գեղարվեստի ակադեմիա: 1933-ին Միլանում բացվում է նրա առաջին անհատականը: 1939-ին հաստափում է Փարիզում: Մինչեւ իր մահը նա ավելի քան երեք տասնյակ անհատական ցուցահանդեսներ է ունեցել Ֆրանսիայի, Իտալիայի, Շվեյցարիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների զանազան քաղաքներում եւ արժանացել մի շարք մրցանակների:

Մուրաֆյանը հարում է իմարեսինիզմին, սիրում է ջերմ, տաք գույներ: Գծանկարն ու գույնը նկարչի կտավներում հանդես են գալիս շաղկապված: Նրա



պատկերներին հատուկ է կարուցվածքային պարզությունը: Գումարծերի ազատ խաղը կտավի հարթության վրա ստեղծում է արտահայտիչ կշռույթ, մերքին շարժում: Կարմիր, ենթին, կանաչ տաք գույների գուգորդումները ինաստավորում են այդ շարժումը, բացահատում նրա քննական, բանատեղծական խորքը, ուր հաճախ առկա են նաև ողբերգական երանգներ:

Մուրաֆյանը ունի տարբեր ժամաների գործեր, սակայն բնանկարը գերակշռող է: Անտառային աշնան տեսարաններում, որոնք առավել հարազարդ են նկարչին, բացակա է մարդը: Այդ բնանկարներում ցայտուն են մենուրյան ու կարտոֆի հեռավոր ու սրտագին հնչյունները: Նկարչի վրձինը գույների նուրբ շաղախունվագույն բնանկարները: Բնության ու կյանքի նկատմամբ նկարչի տածած անկեղծ սերն ու հավատը նրա արվեստին հաղորդում են առողջ ու կենսախինդ բովանդակություն:

Մուրաֆյանի ստեղծագործությունից տարանջատ չեն նրա արվեստաբանական աշխատությունները, որոնք աչքի են ընկնում հնուտ մեկնություններով ու հակիրծ, պատկերավոր լեզվով: Նրա գրչին են պատկանում «Նկարչության դասական դպրոցները եւ արդի ձգտումները», «Յայաստանի մեջ վրձնով ու գրչով», «Արվեստի տեսաբանները 18-19-րդ դարերում» աշխատությունները ու բազմաթիվ հոդվածներ:

Պատկերացնելով արվեստագետի դաժան մանկությունն ու կյանքի աստանադական ուղին՝ անկարելի է չիշել նրա որդում՝ Արմենին, մաթեմատիկոս եւ պատմաբան, հայ միջնադարյան մշակույթի ուսումնասիրումն ու տարածմանը նվիրված բացարձիկ մի եռյուն:

Բավական ուշ «բախվելով» հայրենի երկրի գեղեցկություններին, Զարեհ Մուրաֆյանի հոգում մամկուց բույն դրած ու չհանգչող կարոտը գարբնեց, փոխվեց կենդանի, հուզող իրականության՝ արվեստագետին պարզեւելով նորոգ երազանք ու երջանկություն:


Հահեն ԽԱՅԱՏՐՅԱՆ



1 Եկեղեցին ելք/Sortie de l'église/1965


2 Տաթև/Tathev/1970

3 Հայաստանի ոսկե սունը/L'automne doré de l'Arménie/1964



2

ZAREH MOUTAFIAN



3

Տիգրան Մատուլյան



Ծնվել է 1960 թ.

Ուսումնառություն՝

1974-1980 - Արվեստի ստուդիա, Երևան, Հայաստան
1980-1982 - Գեղարվեստի ուսումնարան, Երևան, Հայաստան
1982-1984 - Արվեստի ուսումնարան «Գրաֆիկա», Ռիგա, Լատվիա



1



2

Յուցահանդեսներ

1995 - Կաներային թատրոնի ցուցասրահ, Երևան, Հայաստան
1996 - Տորոնոս, Կանադա
1997 - Մոնրեալ, Կանադա
1998 - «Յուցահանդես նվիրված Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին», Եջմիածին, Հայաստան
1999 - «Արժանապատիվ ապագա», Երևան, Հայաստան
2000 - Բեյրութ, Լիբանան
2006 - Անհատական ցուցահանդես, Երևան, Հայաստան
2006 - «Ֆրանսիան հայ արվեստագետների աշբերով», Երևան, Հայաստան
2007 - «Օրանժ» սրահ, Փարիզ, Ֆրանսիա:

Մեկ անգամ գտնելով իր թեման,
Տիգրան Մատուլյանը հետևում է
դրան լրջորեն եւ հետեւողականուն,
փորձելով գգալ դրա ամբողջ խորությունը: Անկասկած նկարչի
ոգեշնչման աղբյուրը նույր
զարդարվեստով Արեւելքն է:
Նկարչի՝ զարդերի նկատմամբ
էսթետիկական ձգտումը զուգահեռ-
վում է բյուզանդական խճանկարա-
յին եւ ոսկերչական արվեստին, հայ-
կական եւ պարսկական գորգերին
եւ կտավներին, հնդկական ներկ-
ված կտորներին: Նկարչի վարպե-
տությունը, ներդաշնակ պատկեր-
ները արտահայտում են նրա խորը
հետաքրքրությունները կյանքի ամ-
ստեսանելի, խորհրդավոր կողմերի
նկատմամբ:

Մարիմա Ստեփանյան
արվեստաբան

Tigrane MATOULIAN



4



3

Né en 1960

1974-1980 - Studio d'arts, Erevan, Arménie
1980-1982 - Collège d'arts, Erevan, Arménie.
1982-1984 - Collège d'arts «Graphica», Riga, Lettonie

Expositions

1995 - Salle d'exposition du Théâtre de Chambre
1996 - Erevan, Arménie
1997 - Toronto, Canada
1998 - Montréal, Canada : Exposition consacrée au 1700e anniversaire de l'adoption du christianisme en Arménie
1999 - Etchmiadzine, Arménie : «Avenir assuré»
2000 - Erevan, Arménie
2006 - Beyrouth, Liban : Exposition personnelle
2006 - Erevan, Arménie : «La France vue par les artistes arméniens».
2007 - Paris, France : «Orange»

1
Գիշեր
Լա նույ

2
Հարսնացուներ
Լես մարիա

3
Գարուն
Լե պրինտում

4
Հանդիպում
Լա րենդրուն

5
Ծաղկազար
Լե դե ռամեա

Ayant trouvé son thème une fois pour toutes, Tigrane Matoulian le suit très sérieusement et conscientieusement, tâchant de reconnaître toute sa profondeur. Il est hors de doute que la source d'inspiration de l'artiste est l'Orient avec son sens raffiné de la décoration. La passion esthétique de Matoulian pour la décoration, loin de tout style historique concret, nous reporte par association vers les mosaïques et les bijoux byzantins, les tapis et les tissus arméniens et persans, les toiles imprimées indiennes. Ses motifs vivaces, magistralement organiques, expriment l'attitude complexe de l'artiste à l'égard des aspects invisibles et mystérieux de la vie.



Marina Stepanian,
critique d'art




Խորամի կտորապյուղ «Դեպի լուս», Կոտայք մարզի Շերտբերդ գյուղի Սուրբ Նահատակաց եկեղեցում, 355x55 մ, 2003 թ. / Le rideau de Sanctuaire, "Vers la lumière", la région de Kotayk, a l'église St. Martys de Theghenik.

գորելեն

**Կարապետ Գամաղեյան
արվեստարան,
Անուշ Եղիազարյան
մանկավարժական
գիտ. թեկնածու**

Կարապետ Եղիազարյանը համարվում է մեզանում արվեստի այնպիսի մի բարդ ճուղի հիմնադիրն ու զարգացողը, որը մինչ նա հայ մշակույքի սապառեղուում ծենավորված չէր: Լրա հմտության ու ճաշակի շնորհիվ ի սկզբանե գեղջկական միջավայրից ծնված կարպետագործական արհեստը շրջադարձ կատարեց դեպի պղոփխինալ բնագավառը վերածվելով զարգացած քաղաքային արվեստի՝ գորելենագործության: Կարապետ Եղիազարյանի ջանքերով հայկական գորելենը ճանաչվեց նախկին մեծ կայսրության՝ Խորհրդային Միության գորերե բոլոր հանրապետություններում: Միաժամանակ նրա ոչ միայն ստեղծագործական աշխատանքի, այլև մանկավարժական ծիրքի շնորհիվ գորելենը ստացավ իր հայկական դիմակից. ստեղծվեց ազգային գորելենագործության դպրոց, որն իր հերթին ոճային ճնուղավորումներ ունեցավ եւ այժմ հաջողությամբ շարունա-



Գեղանկարիչ - գորելենագործ Կարառես Եղիազարյան

**2007 թ. մարտի 7-ին
լրացավ վասակածա
նկարիչ, մեզանում եւ
արտելուրում լայն
ճանաչում ունեցող
արվեստագետ
Կարառես
Եղիազարյանի
75-ամյակը:
Նկարիչը կանոնից
անժամանակ հեռացավ**

**2006-ին՝ բազում
շրագործված ծրագրե
րողներով, բայց նաև
հսկայական մի
ժառանգություն
ավանդելով
սերունդներին:**

կում է զարգանայ՝ ժամանակակից արվեստի նվաճումներին համարայի: Կարապետ Եղիազարյանը ճանապահական կրօնության ստացել Լեզինգդրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ), եղել է Հայաստանի նկարչչների միության անդամ, նկարչչների միության նախագահության անդամ, համամիութենական դեկորատիվ-կիրառական արվեստի նախաճյուղի հանձնաժողովի անդամ, ՍՍՌ վաստակավոր նկարիչ, ստացել է բազմաթիվ պատվոգրեր եւ մրցանակներ: Գրիգոր Խանջյանի հետ նա համահենինակն է Երևանի մարզահամերգային համալիրի «Վերանուն» գորելենի: Արվեստագետի մեծանուր գորելենների ու խճանկարների մի մասը գտնվում է ՍՊՀ Երևանի բանակում:

Կանքի վերջին տարիներին Կարապետ Եղիազարյանը ծննդանուս եղավ Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի Սրբոց Սահատակաց եկեղեցու Ավագ խորանի վարագույրի մոնումենտալ գորելենի ստեղծմանը, ավարտին հասցեց այս դժվարին գործը, որը եւ դարձավ իր վերջին պատգամը տերություններին: Կարծում ենք, որ այս գործը ուշագրավ եւ նշանակալի է ոչ միայն գորելենագործության, այլև ընդհանրապես հայ կերպարվեստի համար՝ իր ոճային եւ գաղափարական մոտեցումներով: Ուստի

ստորև ներկայացնում ենք այդ ստեղծագործության արվեստագիտական վերլուծության կրճատված տարբերակը (ամբողջական հետազոտությունը տես՝ ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, N 3, էջ 139-150): Յայ արվեստաեր հասարակայինությունը 2003 թ. աշնան դեկորատիվ-կիրառական արվեստներին վերաբերող ստուգատեսին արի ունեցավ ծանոթանալու արվեստի մի նոր ստեղծագործության, յուլորինակ գլուխացործոցի, որն իրավանացվել էր գորելենագործության ասպարեզի ռահվիրա Կարապետ Եղիազարյանի շամբերու: Ներկայացված հյուսվածք-գորելենը մեծանուր (350x550) ստեղծագործություն է՝ կատարված հղուարտ թեմայով:

Սրոնմենտալ է մանավանդ դեկորատիվ-մոնումենտալ ստեղծագործության արարման եւ գոյատեսման համար մի շարք նախադրյալներ են ամերական նորագույն գործական բնականագույն գործականությունները, կիրառման դոլոր, նյութական բազա, գաղափարական ուղղվածություն, տեխնիկական և տեխնոլոգիական գործուներ, աշխատութ եւ այս ամենի կենտրոնում՝ արվեստագետ, որը կիրագրութ գաղափարը, կամարմավորի կերպարը, կամբողջացնի հորինվածքը: Ուստի հասկանալի է, թե ինչու մե-

զանում, հատկապես վերջին ժամանակներս, հազվադեպ են այսօրինակ աշխատատար արվեստի գործերը: Դժվար է պատկերացնել, թե ինչպես է մեկ անհատ-արվեստագետն իր մեջ միատեղություն մկանի ստեղծագործության ընթացքում:

Քննության առարկա գորելենը թեմայի, սյումեթի առումով հոգեւոր նյութը է արժարածում եւ կատարված է արվեստի այս ուղղությանը համապատասխան: Գորելենը նախատեսված է կոնկրետ միջավայրի՝ թեղենիքի նորակառուց Սրբոց Խանաւակաց եկեղեցու սրահի համար՝ ծառայելով որպես Ավագ խորանի վարագույն: Այն նաև հասցեագոված է ողջակի համայնքին հոգեւոր ընկալիցների դաշտ էմիգրանտ գեղագիտական ներազդեցություններով համալրելու համար: Բովանդակային հեմքը «Երկրպագության» եւ «Դայտնության» թեմաների են, որոնց համապատասխան կառուցված է ստեղծագործության բարդ-հանգուցային, բազմաշերտ, բայց ընթեռնելի հորինվածքը: Այն դա-

մշակույթ

«Նարեկացի» արվեստի միությունը (ՆԱՄ) համեստությամբ նշեց Զատկի տոնին նախորդող Ավագ շարարթ: Ակամած Ծաղկազգարդից ՆԱՄ-ի դահլիճում հնչեցին հոգեւոր ստեղծագործություններ, իսկ Հայ Եկեղեցու հոգեւորականները ներկայացրեցին յուրաքանչյուր օրվա խորհուրդը:

Ծաղկազգարդի օրը գեղեցիկ կատարումներով հանդես եկավ «Լույս» վոկալ կվինտետը: Ավագ երկուշարքի մեր սրահում հյու-

Միջոցսովումներ «ՆԱՐԵԿԱՑԻ» սրվեստի միությունում



"SCREAMERS" ֆիլմ ՆԱՄ-ում

Ապրիլ 15-ին համելիպում էր "SCREAMERS" ("ճշացողները") ֆիլմի ռեժիսոր, ամերիկաբնակ Կառապետյանի (ԱՄՆ) հետ: Համելիպու-



րընկալեց Զրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու

«Սաղմոս» երգչախումբը, իսկ օրվա խորհրդի մասին խոսեց նոյն եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Կյուրեղ քահանա Տայյանը:

Ավագ երեքարքի Սայհյան տրիոն ներկայացրեց Կոմիտասի և Նարեկացու ստեղծագործությունները, օրվա խորհրդի մասին խոսեց Տեր Ղետին քահանա Մայլյանը:

Ավագ չորեքարքի ֆիլմի ցուցադրության օր էր: Ավագ իհնացարքի դաշնամուրային կատարումով հանդես եկավ դաշնակահար Լուսին Գրիգորյանը, ներկայացրեց Կոմիտասի «Յոթ պար» շարքը և Գյուրջենի ստեղծագործությունները: Ավագ ուրբաթ Նարեկացի կամերային երաժշտության ընկերության երաժշտները ներկայացրեցին Բախի և Հայդի ստեղծագործությունները: Իսկ Ավագ շարարթ օրը «Միհր» պարային պլաստիկայի թատրոնը համելի նշանակություն ունեցաւ:

Յուր էր «Դեւեզասան»

Ապրիլի 19-30-ը «Դեւեզաման» խումբը Ֆրանսիայից ՆԱՄ-ի հյուրն էր: Նրանք առաջնի անգամ լինելով Հայաստանում, համերգներով հանդես եկան ոչ միայն միության սրահում, այլև Գյումրի, Ալավերդի, Գորիս, և Շուշի քաղաքներում: Մասնակցեցին նաև ապրիլի 24-ի Եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչման համելիսությանը:

մշակույթ

«Ոգեկոչում արվեստի ծաշով»

«Նարեկացի» արվեստի միության համար արդեն ավանդույթ է դարձել ապրիլ 24-ի ցեղասպանության հիշատակը արվեստի շնչով նշելը: Ոգեկոչման երեկոյին նամակցում էին արվեստագետներ տարբեր երկուներից: Ժամը 17-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի սրահում ցուցադրվեցին 8 գեղանկարիչների, 3 քանդակագործների և 4 լուսանկարիչների թեմատիկ աշխատանքները: Իսկ ժամը 18-ին համալսարանի մեջ դահլիճում տեղի ունեցավ համերգ Հայաստանի և արտերկի երաժշտմերի մասնակցությամբ: Նրանց թվում էր նաև Արտօն Թունջրոյացընը: Ելույթը ունեցան նաև հաշմանդամ երաժշտությունը: Համերգից հետո մասնակիցները այցելեցին Շիծեռնակաբերդ:



Համերգ

Մայիսի 11-ին «Ազգային պատկերասրահ» 3-րդ միջազգային երաժշտական փառատոնին մասնակցեցին «Նարեկացի» կամերային երաժշտության ընկերության անդամները, որոնք լրացնաբնակ ծանաչված թափութակահար Ալեքսանդր Չառչյանի հետ ներկայացրեցին Վիվալդիի եւ Շուլբերտի ստեղծագործությունները:



Հարուրակվել է «Աշխարհի 7 իրաւալիների» նոր ցուցակը

9 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Պորտուգալիայի մայրաքաղաքում անցկացված համաշխարհային մրցույթի եղափակիչում հրապարակվել է «Աշխարհի 7 իրաւալիների» նոր ցուցակը: Ըստ հեռախոսային եւ էլեկտրոնային քվեարկության, որին մասնակցել է մոտ 100 մլն մարդ, երրորդ հազարամյակի յոթերորդ տարվա յոթերորդ ամսվա յոթերորդ օրը (լիսարոնյան ժամանակով) պաշտոնական աշխարհի հրապարակմեր եմ ծանաչվել Շիմական մեծ պարիսպը, Յորովանանում գտնվող Պետրայի ժայռապիր համալիրը, Ոին դե Ժանեյրոյի Շիսուսի վիհանի արձանը, Պերուի հին ինկերի Մաչու-Պիչու քաղաքը, մեքսիկական Յուկատան թերակղզում գտնվող հին մայաների Չիչեն-Իտցա բուրգը, Չօնմի Կոլիզեյը եւ Շնոկաստանի Թաջ Սահալը:



Համբարձում ճապուրյանի կատարումները

Ապրիլ 28 կլարնետահար Համբարձում ճապուրյանը (Կանադա) հանդես եկավ լարային կվինտետի հետ (Տիգրան Սաթեւոյան-ջուրակ, Լեւոն Մարկուրյան-ջուրակ, Արմեն Թորոսյան-ջուրակ, Լեւոն Առաքելյան-թափութակ), խաչատուր Սավյան-կոնտրաբաս): Կատարեցին միջնադարյան հոգեւոր տաղեր, Կոմիտաս, Սպենդիարյան, Խաչատրյան, որոնց մշակումները կատարել էր պրոֆեսոր Ռուբեն Ալբումյանը: Նամատիպ մեկնաբանությունը մեծ բավականությամբ ընդունեց հանդիսատես: Համբարձում ճապուրյանը լարային կվինտետի հետ համերգ է ունեցել նաև Սայր աթոռ Սրբական Գեւորգյան ճենարանում եւ Շուշիում:

Ցուցահանդես


Մայիսի 25-31-ը ՆԱՄ-ի ցուցարարության ցուցադրվեց քանդակագործ Քերիբնազ Գալստյանի քանդակները եւ ինստալացիոն աշխատանքները «Դին աստվածներ» խորագրով: Ցուցադրությունը ուղեկցվում էր ներկայացումով («Միհր» պարային պլաստիկայի թատրոն): Արվեստագետներ էրեւանի գեղարվեստա-թատրոնական ինստիտուտի քանդակի բաժինը, Արա Հարությունյանի արվեստանոցը: Մասնակցել եւ կազմակերպել է մոտ 40 ցուցահանդես: Քերիբնազի աշխատանքները զարդարում են ոչ միայն Հայաստանում եւ Արցախում գործող թաճարանները, այլև ցուցադրում են արտերկրուում:



Էդվարդ Սասուն

Sրբանի գեղարվեստի պետական ակադեմիայի Ալբերտ Եւ Թովե Բոյաջյան պատկերասրահում կազմակերպված անհատական ցուցահանրեսում գեղանկարի Էդվարդ Սասունը (Ավագյան) ներկայացրել էր քանի տարիների ստեղծագործական պրատումների ու ձեռքբերումների հանրագումարը: Մի արվեստագետ, որի որոնումների ու հիմնարացահայտնամ ճանապարհը բավականին հետաքրքիր հետափի ունի:

Ծնվել է 1955 թվականին Թալինի Շղարշիկ գյուղում, Մուշից գաղրած մտավորականների ընտանիքում: Մանկուց սիրել է նկարել, սակայն Երեւանի պետական համալսարանի տեխնիկական կիրենետիկայի ֆակուլտետն ավարտելուց հետո միայն, անսպալվ հոգու ձայնին, ամբողջությամբ նվիրվել է նկարչությանը: Սասանագիտական կրթությունը Պետերոսի գեղարվեստի ակադեմիայում (1980-87 թթ. պրոֆ. Բ. Ուզարովի արվեստանոց) եւ հետազույն Արեմուտիքի եւ Կրեւելի երկրներում ճամփորդությունների ընթացքում հանաշխարհային մշակույթի ու արդի կերպարվեստի ուսումնաժողությունը կարեւոր



Վերադարձ դեռի արմասները

նախապայման համադիսացան ստեղծագործական անհատականության ծննդավորման համար:

Նկարիչն ստեղծել է երկու հայութից ավելի գեղանկարչական ու գրաֆիկական գործեր, որոնք ցուցարվել են Եվրոպայի եւ Արևելքի երկրների հեղինակավոր պատկերահաներում, համգովանել շուրջ երկու տասնյակ մասնավոր համարություններում: Ներկա ցուցահանդեսը ճանաչված նկարչի արվեստում:

Լու առաջին լայն հնարավորությունն է հայրենիքում (1988-ին աշխատանքները ցուցադրվել են Հայաստանի ազգային պատկերասրահի Մարտունու մասնաճյուղում): Ցուցահանդեսն իր բովանդակությամբ ու հայեցակարգով իրավամբ կարելի է անվանել «Վերադարձ դեռի արմասները» նախ այն կոնքետ իմաստով, որ մի շրջան՝ 1997-2005 թթ. ապրել ու ստեղծագործել է հայրենիքի հեռու Բանգկո-



Սամբաշի դիմանկարը, 1982թ.

Հայրենի բնաշխարհի գորտիկ անկյումների առանձնակի սերն ու ակնածանքը մարմնավորվում են քնարական տրամադրությամբ ներշնչված բնանկարների մեջ, որոնք հիմնականում ներկայանում են շարերով «Լոռի», «Ծննդավայր Շղարշիկ», «Ջանքավան», «Մեւան», «Դիլիջան» եւ այլն: Նկարչի դիտողականության եւ կատարողական վարպետության վկայությունն է եղանակի ու օրվա տարբեր պահերի, տրամադրությունների համապատասխան կոլորիտի ընտրությունը՝ նորին երանգավորումց մինչեւ վառվորուն գունաշերտերի համադրումը, որոնք թեթև ու թափանցիկ վրձնահարվածներով կառուցված, արեւի լուսով ու շեմությամբ ողողված բնապատկերներին նոր գրավչություն են հաղորդում, հուզում զգացումի անկեղծությամբ ու խորությամբ («Գարուն», 1997, «Մեղրաձորի ծմեռը», 2006, «Աշունը Շղարշիկում», 1993, «Աշտարակի հին կամուրջը», 1995, «Իջևան», 1996): Արարատ, Արագած, Մեւան պատկերող բնանկարներում («Արարատ լեռը», 1997, 2004, 2006, «Լեռներ Մեւանում», 1994, «Գարունը Յայաստանում», 1997) նկարչի ներքին գրուցը հայտնիքը խորիությանը այլ սր-



Կրարատ լեռը, 2004թ.

րությունների հետ մեր վեհի ու հավերժության, մեր տագումայի ու անհանգույթյան տարաբնույթ տրամադրություններով է համակած, ինչը հուզում է ժամանակաշրջանի հոգեներով ու ուրախություններով ապահովությունը հայտնաբերությունը, հեռանկարի ծավալների լուսաստվերային մոդելավորումը ու նույր գունազգացողությամբ:

Եղ. Սասունի կենափիլիստիքայությունը հիմնվում է ազգային ու համամարդկային արժեքների գնահատման այն սկզբունքի վրա, որը բացառում է տարբեր երկրների ու քաղաքակրթությունների միջև գոյություն ունեցող անշրջեղ եւ կարեւորում մարդու եւ բնության ներդաշնակությունը: Նկարչի այս ընկալումները դրսեւորվում են նրա բազմաժան արվեստի բոլոր տեսակներում՝ բնակարի, նախուրմորտի, դիմանկարի, բեմատիկ հորինվածքի մեջ, որոնք հավասարապես հոգեթարազատ են արվեստի նախափարություններին: Մեր ժամանակներին բնակած հականարակը բնականարակը՝ միայն իրեն բնորոշ գեղությունը կատարում է հայկական մշակույթի ու կենափիլի իրերի, առարկաների, մեկ ուրիշում՝ հայկական կարպետի ու ծաղկամկար կտորի կամ բնաշխարհի ծաղկմերի ու մրգիրի միջոցով:

Բավականին ուշագրավ է Եղ. Սասունի վրձնած դիմակարների պատկերասրահը: Ժամանակակից մարդու խոհերն ու ապրումներն ընկալելու, բնորդի խառնվածքը, ներաշխարհ բացահայտելու նկարչի վարպետությունը դրսեւորվում է յուղաներկով եւ ջրաներկով արված գործերում, ուր յուրաքանչյուրի հատկանշական գծերը ներկայացվում են համապատասխան արտահայտչամիջոցներով ու գու-



նային, կոմպոզիցիոն լուծումներով: Մեկ բնորդին պատկերում է հարազատ միջավայրում, ազգային տարազով (նկարչի կիմը Սամտողը, 1982, Բոր Գեւորգյանը, 1998, Ռուստը՝ Ռազմին, 2003, տիկին Արունվան Զունկիումին, 2004, «Նոյ», Ձեսի Քենին, 2004), մեկ շեշտադելով խառնվածքին ու հոգեվիճակին բնորոշ դիրքն ու շարժումները (ծեր կիմը, 1984, Ամին, 2001, Գուրգեն Մելիքյանը, 2006): Դիմանկարների հերոսներ տարբեր ազգությունների, տարիքի ու գրադարձի անհատներ են, որոնց համար, դրանք երկիր նոյրակի քաղաքացի, առաջնային են մարդկային առաջին համականչերը, բարու ու գեղեցիկի ներքին պահանջը:

Նկարչի արվեստում առանձնահատուկ տեղ են գրավում Արեւելքին նկիրված գործերը: Յնդկուի տիկնոց՝ Արորա Սամտող Կումարի (կյանքի ուղեկիցը ուսանողության տարիներից, հինգ զավակների մայր եւ ստեղծագործական ներշնչանքի անսպառ աղբյուրը) շնորհիվ եւ Թայլանդում ապրելու ընթացքում հայտնագործված Արեւելքը ճամփորդական հպանցիկ տպավորություններից առավել խորն ու բազմակողմանի արտացոլում է գտնել Եղ. Սասունի բնամկարներում, դիմանկարներում ու ճամփորդություններում: Յնդկաստանի, Թայլանդի, Սալայագիայի, Լաոսի, Ինդոնեզիայի ինքնատիպ բնաշխարհի՝ միայն իրեն բնորոշ գեղությունը կատարում է հայտնագործված պատկերով ապահով արվեստագետին:

Մարդու եւ նրան շրջապատող առարկայական աշխարհի մասին նկարչի մատուցումներն արտահայտվում են նաև բազմաթիվ նախուրմորտության տարաբնույթ տրամադրություններով է համակած, ինչը հուզում է ժամանակաշրջանի հոգեներով ու ուրախություններով ապահովությունը հայտնաբերությունը, հեռանկարի ծավալների լուսաստվերային մոդելավորումով ու նույր գունազգացողությամբ:

Քարիկա ԱՎԵՏԻՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

Հրատարակիչ
Հայաստանի ազգային պատկերասրահ

Լրատվական գործունեություն
իրականացնող
«ՅՈՐ ԱՐՎԵՏՍ» ՍՊԸ
Հասցեն՝ Երևան, Խանջյան 43, բն. 14
Պետական գրանցման վկայականի համարը՝
03Ս 053641, տրված՝ 20.03. 2002 թ.

Գլխավոր խմբագիր՝ Կարեն ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Թողարկման պատասխանատու,
գործադիր տնօրեն՝ Հասմիկ ԳԻՆՈՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

Փարավոն Միրզոյան (նախագահ)
Վարագդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Արարատ ԱՐԱՍՅԱՆ, Մուրադ ՀԱՍՐԱՅԱՆ,
Մարտին ՄԻՔԱՅԵԼՅԱՆ,
Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Սերգեյ ԽԱԶԻԿՈՂՅԱՆ, Դամիել ԵՐԱԺԻՇ,
Սամվել ԽԱԼԱԲՅԱՆ, Լետոն ԼԱՅԻԿՅԱՆ,
Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

Համակարգչային ձեռավորող
Կարդան ԴԱԼԱՔՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ «ՀԱՅ ԱՐՎԵՏՍԻ»

2007 թ. լիազոր ներկայացուցիչներն են
ԱՄՄ, Լու Անժելե, Շիրան ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՄԷ, Արու Դարի, Անդրանիկ ԴԱՐԼՅԱՆ
ԳԵՐՄԱՆԻԱ, Դաշնություն ՀԱՅԱՍՏԱՆ
ԹՈՒԹԵԱ, Ստամբուլ, Գայանե ԶԱԼԵՍՅԱՆ
ԻՐԱՆ, Թեհրան, Ալբերտ ՔՈՉԱՐՅԱՆ

Սպահան, Ամի ԲԱԲԱՅԱՆ

ԿԱՄԱՆԻԱ, Սոնեալ, Սարո ՄԱՆԿՅԱՆ
ԿԻՊՐՈՍ, Լիկոսիա, Ուլուբեն ՆԱՐՍՊԵՏՅԱՆ
ՇՎԵՅՑԱՐԻԱ, Ժնև, Ներիկ ԱԶԱՏՅԱՆ
ՍԻՐԻԱ, Ջալեա, Ամի ՖԻՇԵՆԿՅԱՆ

Հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՆ-ի

«Ատենախոսությունների արդյունքների տպագրության
համար ընդունելի ամսագրերի ցուցակում»

Գրանցման վկայակամ՝ 01Ս000095

Դասիչ՝ 77789
Ստորագրված է տպագրության 18.08.2007
Ծավալը՝ 5 մամուլ
Տպաքանակը՝ 500

Խմբագրության հասցեն

Երևան, Հանրապետության 32
Հեռախոս՝ (374 10) 52 3501
Խմբագիր՝ (374 91) 45 5347
տնօրեն՝ (374 91) 40 3215
Ֆաք.՝ (374 10) 56 3661
E-mail: hayart02@hotmail.com

Արտասպարուն կատարելիս հղումը
«Հայ արվեստին» պարտադիր է:

բովանդակություն

- 3 Լետոն Լաճիկյան, Ֆրանսիայի հայկական և նշառությունը
- 10 Լիլիթ Աստոյան, Հայաստանի զարդերն ու գանձերը Լիոնում
- 13 Ֆրանսուադ Գոյումջյան, Հասմիկ Տեր-Կարառեսյանը «Ա. Մեւրոյ» կենսունում
- 14 Լետոն Լաճիկյան, «ԳԵՏԱԾԵԼ» երգի հնչյունները Ծանգ Էլիզեի մասուցներում
- 16 Իրինա Բաղդամյան, Ֆրանսիական գեղանկարչությունը Հայաստանի ազգային ուսկերարակում
- 18 Չահեն Խաչատրյան, Զարեհ Սուրախյան - 100
- 20 Տիգրան Սարուսյան
- 22 Վարդիքեր Գամաղեյան, Անուշ Եղիազարյան, Գեղանկարիչ-գորեկենագործ Կարառես Եղիազարյան
- 25 Սուրադ Հաւարայիան, Աղքամարի Ս. Խաչ Եկեղեցին
- 32 «Կենաց տուն»
- 34 Քնարիկ Ավետիսյան, Էղվարդ Սասուն. Վերադարձ գեղի արմանները
- 36 Լիլիթ Սարգսյան, «Հենրի Էլիբեկյան» ալբոմը
- 6-9, 12, 28-31, 33, 38 Սահակուրային լուսեր

ՀԱՄԱՍՏԱԻ ՄԻԶՈՒՆՎ ԿԱՐՈՂ ԵԶ

Կարդալ «Հայ արվեստ» նախորդ համարները
www.armenianart.am

«Այցելեալ» Հայաստանի ազգային ուսկերարակություն
www.gallery.am

Ծանոթանալ հայ դասական մատենագրությանը
www.digilib.am

Ձեռն բերել հայկական հուշանվերներ
www.art.am

Ձեռն բերել հայերեն գրեթե
www.book.am


Տալ հրատարակչական եւ ձեռավորման ուսպերներ
www.mertun.org



«Art-Film»-ը
Արևայիսյանում է
TASCHEN
գերմանական
հրատարակչությունը
Հայաստանում

Գրեթե կարող եք ձեռք բերել
Հայաստանի սպասարկության գրախանութուն:
Տեղեկությունների համար. Հեռ.՝ 583287, E-mail: artfilm@xter.net, www.taschen.com


Հայ արվեստ



Պարուիկ Թեփենիկյան, Տաստիլուրտ, 1989 թ.



Տիգրան Սարուսյան, Սոնա, 2006 թ.




Տեղեկ Արևարակյան, Նատյուրմորտ, 2005 թ.

հավագածու

ԱՐՄԵՆ ՏՈՒՐ

- Ավիատոմսերի վաճառք բոլոր ուղղություններով
- Դայաստանի եւ Երեւանի տարածքում հյուրանոցների ամրագրում
- Շրջագայություններ Դայաստանում
- Տրանսֆեր (օդանավակայաց-հյուրանոց-օդանավակայաց)
- Դայկական կոնյակների եւ գինիների համտես
- Գիդ-թարգմանիչների ծառայություն
- Մշակութային ծրագրերի կազմակերպում (թատրոն, թանգարան, համերգ)
- VIP ծառայություն

-
- Vente de billets d'avion dans toutes les directions
 - Réservation de chambres d'hôtel à Erevan et en Arménie
 - Tours en Arménie
 - Transfert (Aéroport-hôtel-aéroport)
 - Dégustation de vins et de cognacs arméniens
 - Guides et interprètes
 - Organisations de programmes culturels (théâtres, musées, concerts)
 - Services VIP



There are good places
in the world,
but the heart says:

go to Armenia



24, Mashtots Ave., Yerevan, 0002, Republic of Armenia

Tel.: +37410 532190, 532200

Fax: +37410 534400

E-mail: armentour@arminco.com

www.armeniatour.com